


ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՎՐԱՄԱՏԱՆ

«Ցրանժան» (ՆԱՅՈՒՆՅԱՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (16396) ՈՒՐԲԱԹ, 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՐԹԻ



ԳՈՐԾԱԴԻՐ

ՎՐԱՄԱՏԱՆԻ 12-ՐԴ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՐ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍԱԸ

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԵՑ

Դեկտեմբերի 30-ին Վրաստանի խորհրդարանը վստահության քվե հայտնեց նոր վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն և նրա գլխավորած նախարարների կաբինետին, ինչպես նաև պաշտպանեց կառավարության «Ուժեղ, ժողովրդավարական, միասնական Վրաստանի համար» ծրագիրը:

Նոր կառավարությանը կողմ է քվեարկել 86 պատգամավոր, դեմ՝ 28-ը: Խորհրդարանի որոշումը հաստատման համար ներկայացվեց Վրաստանի նախագահին:

Նույն օրը, դեկտեմբերի 30-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրեց Գիորգի Կվիրիկաշվիլուն Վրաստանի վարչապետ նշանակելու մասին կարգադրությունը: Ասենք, որ Գ. Կվիրիկաշվիլին դարձավ նորանկախ Վրաստանի (սկսած 1991թ.-ից) 12-րդ վարչապետը:

Դեռևս դեկտեմբերի 28-ին Վրաստանի վարչապետի թեկնածու Գիորգի Կվիրիկաշվիլին խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց իր կա-




(Հարունակությունը՝ 3-րդ էջում)

«Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրյանին Բատոնո Վան. Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ և «Վրաստան» թերթի խմբագրությանը Նոր տարվա և Սուրբ Ծննդի առթիվ: Վրաց և հայ ժողովուրդների բարեկամության մատչանի վերածված «Վրաստանի» աշխատակիցներին մաղթում եմ հաջողություններ և երջանկություն: Տա Աստված, որ նոր տարին դառնա մեր երկրի համար խաղաղության ու հզորացման տարի:



ԳԻՈՐԳԻ ՍԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ
Վրաստանի նախագահ

«Վրաստան» թերթի խմբագրությանը.



Շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա ու Սուրբ Ծննդյան պայծառ տոների առթիվ: Շուրջ երեք տարվա մեր սերտ համագործակցությունը բարի պտուղներ ունեցավ և այսօր իր 95 տարին բոլորած «Վրաստան» կարող է բարձրագույն, որ պատվով է կատարել երկու քրիստոնյա ժողովուրդների բարեկամության մունետիկի դերը: Ամենայն բարիք ու երջանկություն ձեզ և ձեր ընտանիքներին:

ԻՐԱՎԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ

Սիրելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ վի-

րահայեր



2015 թվականը իրոք բովանդակալից տարի էր հայ-վրացական միջպետական հարաբերություններում: Մենք կարողացանք ավելի բարձր որակ ապահովել հայ-վրաց բարեկամության պաշտպանությանն ու ամրապնդմանը:

(Հարունակությունը՝ 2-րդ էջում)

Մեծարգո պարոն Վան Բայրուրյան.

Վրաստանի հավատարմալ հայության և հոգեւոր դասի անունից շնորհավորում ենք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ ու մաղթում խաղաղ տոնական օրեր:

Թող մարդացած Աստված սիրո, հանդարտության, ջերմեռանդ հավատի մեջ պահի Ձեզ և օրհնի նվիրական Ձեր առաքելությունը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ: Մեզ և Ձեզ մեծ աւետիս»:



Տեր Վազգեն եպիսկոպոս Սիրգախանյան Առաջնորդ Վիրահայոց թեմի



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՎՐԱՍԱՆԻ 12-ՐԴ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՅՐՈՒԹՅԱՄ ԸՆՑԿԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍԱԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ուսումնական կազմը. դրանում գրեթե բոլոր պաշտոնները պահպանել են նախորդ նախարարները, նոր են միայն փոփոխվել արտաքին գործերի նախարարը. այս պաշտոններն ավելի վաղ զբաղեցնում էր Կվիրիկյանը ինքնը:

Գիտության Կվիրիկյանը փոխվարչապետի պաշտոնում առաջադրեց էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Կունսիչվիլու եւ Եներգետիկայի նախարար Կախի Կալաձեի թեկնածությունները, իսկ արտաքին գործերի գերատեսչության ղեկավարի պաշտոնում առաջադրվեց Միխեիլ Զանելիձեի թեկնածությունը, որը մինչ այդ զբաղեցնում էր ԱԳ փոխնախարարի պաշտոնը:

Ներկայացնելով կառավարության «Ուժեղ, ժողովրդավարական ու միասնական Վրաստանի համար» ծրագիրը՝ Գիտության

Կվիրիկյանը հայտարարեց, որ նոր կազմի ղեկավար գերակայությունը լինելու է տնտեսական զարգացումը եւ բնակչության բարեկեցության բարելավումը:


Անդրադառնալով տնտեսական հարցերին, Գիտության Կվիրիկյանը նշեց, որ Վրաստանի կառավարությունը կպահպանի ազգային արժույթի՝ լարի լողացող փոխարժեքի ռեժիմը, որն ամենահարմարն է երկրի համար:

«Ելնելով տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներից եւ լարի փոխարժեքի փոփոխումից, ծագած մարտահրավերների ֆոնին հատկապես կարելու է դրամական ու ֆիսկալ քաղաքականության համաձայնեցված իրագործումը եւ համագործակցությունը միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ՝ ճշտելու աղեկված քաղաքականությունը»:

Նախարարությունը կպահպանի լարի լողացող փոխարժեքի ռեժիմը, որն ամենահարմարն է երկրի համար»,- հայտարարեց Կվիրիկյանը:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա, նրա խոսքով, կարեւորագույն ուղղությունը կլինի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրումն է: Գիտության Կվիրիկյանը հավաստեց, ՆԱՏՕ-ի հետ հետագա մերձեցումը եւ դաշինքին ապագա անդամակցումը նույնպես կառավարության աշխատանքի իմնական ուղղություններից մեկն է, ընդամենը, նշելով, որ Վրաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում կշարունակի պրագմատիկ քաղաքականությունը:

Դեկտեմբերի 30-ին Վրաստանի վարչապետ Գիտության Կվիրիկյանը նախագահությանը անցկացվեց Վրաստանի նոր հաստատված կառավարության անդրահիլ նիստը:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱԼԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Վրաստանի նախագահ Գիտության Մարգվել-Լավիլի Ֆամայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին շնորհավորեց գահակալության 38-ամյա հոբելյանի առթիվ: Շնորհավորական ուղերձում նշելով Կաթողիկոս-Պատրիարքի ծառայությունները, նախագահը Վրաստանի հոգեւոր Յուզվին մաղթել է առողջություն այն կաւոր առաքելության կատարման համար, որը նա ստանձնել է:

54 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄՆ կառավարությունը 54 միլիոն դոլար է հատկացրել Վրաստանի դպրոցների նորացման համար: Ինչպես տեղեկացրեց Վրաստանում ԱՄՆ դեսպանությունը, նորացման աշխատանքներ են տարվում Մցխեթ-Միանթեթի, Շիդա Քարթլիի եւ Սամցխե-Ջավախեթի 30 հանրային դպրոցներում: Վերջին հաշվով, Վրաստանում վերանորոգվելու է շուրջ 100 դպրոց:

Դեսպանությունն առանձնակի երախտագիտություն է հայտնել նախագծի գործընկերներին, Հազարամյակի մարտահրավերի հիմնադրամին եւ Վրաստանի կրթության նախարարությանը:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՑ ԶԻՆՎՈՐՎԱՆՆԵՐԻՆ

Ֆրանսիացի սպաները, որոնք վրացի գինավորականներին կսովորեցնեն օգտագործել օդային անվտանգության համակարգը, Վրաստան կժամանեն 2016 թվականի հունվարին: Այդ մասին ղեկտեմբերի 29-ին հայտարարեց պաշտպանության նախարարի պաշտոնակատար թինա Խիդաշելին:

Նշենք, որ թինա Խիդաշելին 2015 թվականի ամռանը ֆրանսիական կողմի հետ երկու համաձայնագիր է ստորագրել հակաօդային պաշտպանության համակարգի գնումների մասին: «Մի խումբ ֆրանսիացի սպաներ Վրաստան կժամանեն հունվարին: Նրանք երկու տարվա ընթացքում մեր գինծառայողներին կսովորեցնեն կիրառել օդային անվտանգության համակարգը», - հայտարարեց Խիդաշելին:

ԱՐՏԱՐԱՆՈՒՄԸ ՆՎԱԶԵԼ Է

2015 թվականի հունվար-նոյեմբերին, Վրաստանից Ադրբեյջան արտահանված նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, նվազել է 55 տոկոսով (279,5 մլն դոլարով) եւ կազմել շուրջ 231,3 մլն դոլար՝ Վրաստանի արտահանման ընդհանուր ծավալի 11,5 տոկոսը:

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության «Սաքստատ»-ի տվյալներով, 2015 թվականի հունվար-նոյեմբերին Ադրբեյջանը երկրորդ տեղն է զբաղեցրել Վրաստանի հիմնական առետրական գործընկեր երկրների շրջանում: Ադրբեյջանի հետ Վրաստանի արտաքին առետրի շրջանառությունը նշված ժամանակահատվածում կազմել է 725,1 մլն դոլար, ինչը գրեթե 33 տոկոսով պակաս է, քան անցյալ տարվա համապատասխան շրջանում: Ադրբեյջանի հետ ապրանքաշրջանառությունը կազմել է Վրաստանի ամբողջ արտաքին առետրաշրջանառության 8,2 տոկոսը:

ՎՐԱՍԱՆ-ՈՒՄԱՍԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳՅԱԼՆԵՐ ԶԿԱՆ

Վրաստանն առայժմ նախադրյալներ չի տեսնում Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետի Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն:

«Այս փուլում մենք չենք քննարկում Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հնարավորությունը: Այդ հարցը կարող է օրակարգի հարց դառնալ, եթե լուրջ քայլեր ձեռնարկվեն Վրաստանի տարածքային անբողջականության եւ ինքնիշխանության վերականգնման ուղղությամբ», - ասաց Աբաշիձեն:

Վել Է ի պատասխան ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինի այն հայտարարության, որ Ռուսաստանը պատրաստ է Վրաստանի հետ վերականգնել դիվանագիտական հարաբերությունները:

Նշենք, որ դեկտեմբերի 23-ից Ռուսաստանը մեղմացրեց Վրաստանի հետ այցեգրային ռեժիմը եւ հայտարարեց ապագայում անայցեգիր ռեժիմին հնարավոր վերադարձի մասին:

Հիշեցնենք, որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ այցեգրային ռեժիմ է սահմանվել 2000 թվականին: 2008 թվականի սեպտեմբերի 2-ին, Հարավային Օսեթիայում ռազմական հակամարտությունից հետո, Վրաստանը հայտարարեց Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԿԱՐՈՂ Է ՉԼԻՍՎՈՐԵԼ ՎՐԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ղեկտեմբերի 23-ին Իրակլի Դարիբաշվիլին հրաժարական տվեց Վրաստանի վարչապետի պաշտոնից: Ապագա պլանների վերաբերյալ լրագրողների հարցին ի պատասխան Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ, նախեւառաջ, ցանկանում է հանգստանալ:

Իրակլի Դարիբաշվիլին հրաժարական տվեց Վրաստանի վարչապետի պաշտոնից: Ապագա պլանների վերաբերյալ լրագրողների հարցին ի պատասխան Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ, նախեւառաջ, ցանկանում է հանգստանալ:

թյան ժամանակ: Նրա լիազորություններն ժամկետը լրանում է 2016 թվականին:

Դարիբաշվիլին ղեկտեմբերի 23-ին բոլորի համար անսպասելիորեն հայտարարեց իր պաշտոնաթողության մասին: Նա Վրաստանի կառավարության ղեկավարի պաշտոնն ստանձնել էր 2013 թվականին՝ այդ պաշտոնում փոխարինելով «Վրացական երազանք» կուլիցիայի հիմնադիր Բիժինա Իվանիշվիլուն:

ԵՆԹԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾԱՆԱԴԱՐՅՈՒՄ ԿԵՐԱՆՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է

Դեկտեմբերի 30-ին Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների ղեկավարամետի փոխնախագահ Իրակլի Ներգիանին ծանոթացավ միջազգային նշանակության Փոնիճալա-Մառնուլի-Գուգուրի ավտոմոբիլային վերանորոգման աշխատանքների ընթացքին:

ժի շրջանակներում, վերանորոգվելու են նաեւ Բոլնիսի եւ Դմանիսի մունիցիպալիտետների ճանապարհներն ու դրանց ճյուղավորումները:

Ժաշրջանը կկապի Հայաստանի հետ: Ծանապարհի վերանորոգման աշխատանքները մեկնարկեցին 2015 թվականի նոյեմբերին եւ կավարտվեն 2016 թվականին: Վրաստանի պետական բյուջեից ֆինանսավորվող նախագծի արժեքը կազմում է 19 միլիոն լարի:

Ինչպես տեղեկացրին տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարությունում, 15 կիլոմետր երկարության ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքներն իրականացնում են երկու օբյեկտներ: Նախագ-

երկարության ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքներն իրականացնում են երկու օբյեկտներ: Նախագ-

ՆՈՐՈՒՅՑ

ՍԻՊԱՐԵՏՆԵՐԻ ԵՎ ԱԼԿՈՂՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՔՅԻՉՆԵՐՆ ԱՎԵԼԱՅՎՈՒՄ ԵՆ

Վրաստանի խորհրդարանը՝ ծայների մեծամասնությամբ հավանություն տվեց սիգարետների եւ ալկոհոլային խմիչքների արժեքների ավելացմանը:

Ընդունված օրենքի համաձայն, 2016 թվականի հունվարի 1-ից ֆիլտրով սիգարետի մեկ տուփի արժեքը կկազմի 0,2 լարի, անֆիլտրինը՝ 0,05 լարի: Հատվածառ սիգարետների արժեքը 0,4 լարի, ֆիլտրով եւ անֆիլտր սիգարետների արժեքը, համապատասխանաբար, ավելացվում է 5-ից՝ 10 տոկոս:

Ընդունված օրենքի համաձայն, 2016 թվականի հունվարի 1-ից ֆիլտրով սիգարետի մեկ տուփի արժեքը կկազմի 0,2 լարի, անֆիլտրինը՝ 0,05 լարի: Հատվածառ սիգարետների արժեքը 0,4 լարի, ֆիլտրով եւ անֆիլտր սիգարետների արժեքը, համապատասխանաբար, ավելացվում է 5-ից՝ 10 տոկոս:

2016 թվականի հունվարի 1-ից՝ 10-ից 15 լարիով ավելացվում է վիսկի, ռոմի, ջինի եւ մյուս ալկոհոլային խմիչքների արժեքը:

Արժեքի արժեքի բարձրացման արդյունքում պետբյուջեն լրացուցիչ կստանա շուրջ 90 միլիոն լարի: Վերոնշյալ փոփոխությունն ընդունվել է Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ:



